

խէ իւր նշանակութիւնը (Հյկզ.):

Սպասներ ալ տեսանք՝ որոնք անյիշատակ նախկին դարերուն, յետոյ երեւան կու գան. ինչպէս կարասձագ (աստ, 25), փարչ (28), պարզուտ (31), դմբիչ (31), բոնդրոշք (34), կձիձ (40), շերեփ (40): Ասոնք այդ շրջանէն յառաջ չկային Հայոց մէջ եւ նո՞ր հնարուեցան կամ մտան արտաքուստ: Չենք կարող համարձակ պատասխանել: Անյիշատակութիւնը միշտ նշան չէ չգոյութեան. զի շատ անգամ առիթն է որ յիշել կու տայ իր մը, եւ ոչ թէ գոյութիւնը: Բայց ադոր հակառակ շատ դիւրաւ պիտի սխալինք՝ բոլոր այդ սպասներն հանելով մինչեւ Ե դար: Այս կէտը ճշդել՝ ժամանակի գործն է:

Միջնադարեան սպասներէն կան ոմանք՝ որ օտար կոչումներ ալ ունին. ինչպէս ձառայ (աստ, 25). տօգտօքան (77). բափուշք (42), պրս. բեփուշէն՝ որ կը նշանակէ ընդհանուր «անօթք քարեղէն կամ փայտեղէն» (Գ. Գպ.). ջովլի (աստ, 31), պրս. չավլիէն, որ է ցորենի ծղօտէ հիւսուած սկաւառակ (նոյն). ակիշ (աստ, 36), պրս. ակիշէն, որ է կախեալ կամ երկայնեալ (նոյն): Կրնանք աւելի համարձակօրէն նորամուտ համարել ասոնց ձեւերն անուանց հետ: